Պարթեւ–Արշակունիներից, այլ սրանց էլ նախորդների շրջանից:

Այս Ոստանը 1878 թ. ռուսներին յանձնելու ժամանակ ընդամենը 290 տուն բնակչութիւն կար, 195 տունը Հայ, 95 տունը խալամացածներ, որոնք Պետական ծառայող եւ կալուածատէր էին. իսկ Հայերը սակ արհեստաւոր, 25 հոգի փերեզակ, մրգավաճառ կային մէջերը: Հայերը ջուլհակ էին, ներկարար, խաղախորդ, դերձակ, կօշկակար, դարբին, պղնձագործ, կլէկոց եւ պայտառ: 1878 թ. եօթը հայի դիւղ կար ընդամենը 125 տնով: 1913 թ. ցուցակագրութեան համաձայն — Ջուջուրիս, Ջարթենիս, Թամատուա, Այրիկ–(էյրիք) Կուրաթ, Ադարակ, Բարդուղ, Ոլոր գեղերում 270 տուն Հայեր կային, բացի այդ Միրինոց, Պարէզ, Ջերմուկ, Փոսիկ, Բանջրոտ, Մալակէզ, Պարակէզ եւ Կրոնք գեղերում 250 տնուոր գաղթականներ կային հաստատուած, որոնք զոհուեցան 1918 թ. արշաւանքին[1]: Իսկ Օլթի քաղաքում բնիկների–հայերի թիւը 195 տուն էր բայց Արդանուշեցի, Արդվինցի, Տանձոտցի, Շաւշէթցի, Ախալցխացի, Ախալքալաքցի, Ալեքսանդրապոլցի եւ Ռուսաստանի այլ եւ այլ կողմերից հաւաքուած, հաստատուած, սեփական տնատէր, խանթի տէր եւ տեւտրա–

[1] Այս մասին Тифлисск. Листок-ում գրուածքներ ունիմ: